Հավելված 1

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

2021 թվականի հունվարի 14-ի N 24-Ա/2 հրամանի

ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԲԱԺԱՆՈՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ

1. Ծրագրի բովանդակությունը

Ծրագրի իրականացման հիմքում ընկած է կրթության և մշակույթի ընկալումը՝ որպես մեկ ամբողջություն: Կրթությունը, մշակույթը և մշակութային դաստիարակությունը փոխկապակցված և զուգահեռ քայլող գործընթացներ են, ինչից ելնելով՝ անհրաժեշտ է ապահովել վերջինի սահուն սինթեզումը: Որպես ծրագրի բաղադրիչ ներդրվել է դպրոցական բաժանորդային համակարգը, ըստ որի՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը նախատեսում է դպրոցական տարբեր տարիքային խմբերում սերմանել մշակութային հաստատություններ այցելելու մշակույթ: Այս փուլն իրականանում է տոմսային համակարգի միջոցով, որը հանրակրթական դպրոցներում սովորող յուրաքանչյուր աշակերտի հնարավորություն է ընձեռում մինչև հրամանով սահմանված ժամանակահատվածի ավարտն այցելել մշակութային երեք հաստատություն (թանգարան, թատրոն, համերգասրահ)՝ անվճար հիմունքներով:

2. Ծրագրի նպատակը

Մշակութային միջոցառումներին աշակերտների ներգրավվածության բարձրացում, մշակութային հաստատություն այցելելու ավանդույթի, գեղարվեստական ճաշակի և լայն աշխարհայացքի ձևավորում:

3. Ակնկալվող արդյունքը

Բաժանորդային համակարգը հնարավորություն է տալիս Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում սովորող ավելի քան 386.000 աշակերտների, անկախ սոցիալական կարգավիճակից, բնակության վայրից և մշակութային հաստատության հասանելիությունից, մասնակցել իր համայնքի կամ ՀՀ ցանկացած այլ քաղաքի մշակութային միջոցառմանը: Ծրագիրը երաշխավորում է դպրոցահասակների մշակութային կրթության իրավունքի իրացման նվազագույն հնարավորությունը՝ միաժամանակ մշակութային հաստատություններին ընձեռելով նոր այցելուներ ունենալու և մշակութային այլ օջախների հետ հավասար պայմաններում մրցակցելու հնարավորություն: Անկախ հանդիսատեսի քանակից մարզային հաստատությունների (թատրոն, համերգասրահ) դեպքում երաշխավորվում է ամբողջական դահլիճի վարձավճար: